ՀՀ ԿԳՄՄՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ԳԱՅԱՆԵ ԱԲԱՍՅԱՆԻ 2019Թ.ՀՈԿՏԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատանքի բնույթից և իմ գործառույթներից ելնելով՝ մշտական կապի մեջ եմ եղել նախարարության Մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության, Մարզական կազմակերպությունների և մանկապատանեկան սպորտի քաղաքականության, Սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության, Երիտասարդական քաղաքականության վարչությունների և Հայաստանի Հանրապետության մարզական ֆեդերացիաների ներկայացուցիչների հետ՝ լուսաբանելով նրանց աշխատանքները:
2. Կազմակերպել և լուսաբանել եմ նախարար Արայիկ Հարությունյանի, փոխնախարարներ Գևորգ Լոռեցյանի և Գրիշա Թամրազյանի մասնակցությամբ միջոցառումներ, մամուլի ասուլիսներ:
3. Հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում նախարարության պաշտոնական կայքում (edu.am) և «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի պաշտոնական էջում կատարել եմ 72 հրապարակում (հոկտեմբեր՝ 23, նոյեմբեր՝ 32, դեկտեմբեր՝ 17): «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի պաշտոնական էջում հրապարակել եմ նաև ինֆոգրաֆիկաներ, տեսանյութեր՝ նախարարության իրականացրած ծրագրերի վերաբերյալ:
4. Մասնակցել եմ նախարարության տեղեկատվական քաղաքականության իրականացման աշխատանքներին և նոր ծրագրերի, նախագծերի վերաբերյալ ներկայացրել 12 առաջարկություն:
5. Ուսումնասիրել եմ նախարարության սպորտային և երիտասարդական քաղաքականության վերաբերյալ ԶԼՄ-ում տեղ գտած հաղորդագրությունները, հրապարակումները և այլ տեղեկություններ, անհրաժեշտության դեպքում կատարել վերլուծություններ և զեկուցել վարչությանը՝ արձագանքման համար:
6. Ապահովել եմ լրագրողների և քաղաքացիների հետ արդյունավետ կապերը, նրանց՝ սպորտի և երիտասարդության ոլորտներին առնչվող հարցումների, դիմումների, բողոքների վերաբերյալ տրամադրել սպառիչ տեղեկատվություն:

7. Վերոնշյալ ժամանակահատվածում պատասխանել եմ լրատվամիջոցների ներկայացուցիչների՝ սպորտի և երիտասարդության ոլորտին առնչվող շուրջ 30 գրավոր և բանավոր հարցման, անհրաժեշտության դեպքում ապահովել լրատվամիջոցների և աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների կապը:
8. Մասնակցել եմ Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի կազմակերպչական աշխատանքներին՝ սահմանված կարգով կազմակերպելով 16 լրատվամիջոցների ներկայացուցիչների հավատարմագրումը և վերջիններիս ապահովելով անհրաժեշտ տեղեկատվությամբ:

Վարչության փորձագետ՝ **Գայանե Աբասյան**